

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

### ՀԱՅԵՐՔՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻՈՑ ՄԱՏԵԽԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷԶ

(Տպ. Վճռաբէկ 1840)

#### 1. Ավիլ

Իմոր սիրողայնոց ածէր գոյն ծիածանին  
խառնեալ,  
Խառն ի խուռն ահին հոյլ ծերունեաց  
պերճից։

(Նար. տագ. էջ 471)

Անել բառ մը ծանօթ է «սաստել,  
վախցնել» նշանակութեամբ, որուն չէզոքն  
ալ կայ անիլ «վախնալ» ձեռվ, հմտո-  
չարուածեալը էին և ահեալը. Ազաթ.  
Զարհուրմամբ և երկիւղիւ երկու թեոցն  
ծածկէն զերեսս իւրեանց ահեալը (տես  
դարգ. Գաթթճ. և Տաշեան, էջ 226):  
Բայց հոս այս նշանակութիւնը անյարմար  
է. ուստի կ'ենթադրեմ անիլ «հաւացուիլ»,  
բան մը զիտելու համար չորս կողմը շա-  
րուիլ». այս նշանակութիւնը մատնանիշ  
կ'ընեն տաղին յաջորդ տողերը (Տերե  
Զիթենեաց տարածանեն ընդ ոտիւց, ընդ  
ոտիւց մաքրողին մաքրինածեմ հրալիին),  
որոնց մէջ ո՞չ թէ երկիւղ, սարսափ, այլ  
գէպի Քրիստոսը սրտազին ընդունելութիւն  
մը կը պարզուի։

#### 2. Աս

Եռւց տարրաշըոյ զեղ մէջ ասոյ զկէտ  
(Նար. տագ. էջ 472):

Առձ. թառ. զիոտէ աս «զրամ մէ», բայց  
այս նշանակութիւնը հոս չի յարմարիր:  
Բոլորովին անծանօթ բառ մ'է:

#### 3. Ասրօս

Այդ սօս ու տօսափի ծառերդ  
Վարդագոյն ոստո արժակեցին.  
Այդ նոճ ու բողբոջ ասրաւալ՝  
Զարդ առեալ վարդն շոշանին,  
(Նար. տագ. էջ 482)

Այլուստ բոլորովին անծանօթ է. թե-  
րես կը նշանակէ «ոստ», իբր կը կնութիւն  
նախորդ տողին մէջ գանուած ոստ բա-  
ռին։

#### 4. Ալմիղ

Որ զարօսն արմոջ նախ ինքեանց ու-  
տէին և զյստակ ջուրս նախ ինքեանց  
ըմպէին, և զմացեալն յինքեանց զընդ  
գետինս հարեւամն զդարման և զկոխեալն  
ի կնակացն զպտորեալ ջուրսն թողուին  
հօտին (Նար. երգ. էջ 330):

Այս հատուածը ձեւփոխեալ ընգորի-  
նակութիւնն է Եղեկ. լդ. 18-19 համար-  
ներուն, որ Ա. Դրբի մէջ այսպէս է. «Զի-  
ցէ ձեզ բաւական զգեղեցիկ արօտսն յա-  
ռաջագոյն արածել. այլ և զմացեալ ճա-  
րակն ի մէնջ առ ոտն կոտրէից, և ըզ-  
ջուրսն յստակ ըմպէից, և զմացեալսն  
առ ոտն պղտորէից և իւաշինց իմ զկո-  
խան ոտից ձերոց ճարակէին և զջուրսն  
պղտորեալ ի կնակաց ձերոց ըմպէին»։

Այս հատուածին մէջ արմոյ անծանօթ  
բառին համապատասխանն է «զեղեցիկ»,  
որ սակայն մօտաւոր բացատրութիւն մ'է  
միայն. հատուածին ամրողական համե-  
մատութիւնը և յատկապէս ընդ գետին հա-  
րեալ դարմանի հակաղրութիւնը կը ցուց-  
նեն որ արմոյ կը նշանակէ «դեռ չկարուած,  
թարմ, արմատը վրան (նոռա)։ Կազմուած

արմ «արմատ» բառէն՝ ոչ մասնիկով, ինչ-  
պէս ունինք զի՞ն բառէն գեոյ «թանկա-  
զին»:

### 5. Բաւեսան

Ծարաւ բաւենոյ ցոյ փոխանակ նոճից,  
Որ զիմս ունելով զերամբանայ ի փառաւ  
(Նար. ստ. էջ 471)

Նշանակութիւնը բոլորովին անյայտ է:

### 6. Դիրում

Խակ ի կողմանն աջոյ կայից հիւսիսոյ,  
ըստ առակողին ընթացից հետոց աշողակ  
հողմոյն, ունի զառացեալսն տիրապատիւս.  
և զլուսաւորչին սուրբ զաւանարանն: Խակ  
ըստ հարաւոյ զիմաց զարումայ՝ զերա-  
յիցի ընտրեալ պատանին զմարդիրոսն  
Արզմսէն (Նար. Խչ. էջ 385):

Հրատարակիչները յատուկ անուն հա-  
մարելով բառու զիխատառ զրած են. այս-  
պէս կարծած ըլլալու է նաև Նշիք, որով-  
հետև չի նշանակեր այս ձեզ: Բայց իրօք  
հոյ յատուկ անուն պատասելու տեղիր չկայ:  
Նարեկացին կը նկարագրէ տաճարը և կը  
թուէ այն մասերը որ տաճարին զանազան  
կողմերը շինուեցան: Ըստ այսու դարում  
շէնքին վերաբերեալ բառ մը ըլլալու է:  
Այսպէս մուծած է նաև Զախարիասն,  
որ կը նշանակէ յարում, իրը անսույզ  
բառ, «եզր, ծայր կամ ներքին սահման»  
Նշանակութեամբ: Այսէ կ'առնէ նաև Փէշ-  
տիմալճեան բառարան և կը համեմատէ  
պրո. դարիմ (իմա՝ արար. ըլլա tārum)  
«թաղիք թաթարական վրան» բառին  
հետո: Երկուրն ալ կը սփային, ուղիղ մեկ-  
նութիւնը կուհած է Lagarde, Armenische studien, § 596 և կը հասկնայ  
երը. dârôm «հարաւ»: Այս բառը  
տառապարծուած է յն: Ճշքամաս և իրը  
յատուկ անուն առնուելով՝ կը հասկցուի  
«հարաւային Վաղեստին»: Նարեկացին  
զիմած է բուն աղբիրին և բառը կը գոր-  
ծածէ բուն «հարաւ» Նշանակութեամբ,  
իրը յարաղրութիւն մը հայ: հարաւ բառին:  
Հմտո. բևման «հարաւ» փոխառեալ նոյն-  
պէս երրայեցերէնէ:

### 7. Երազգայ

Այնն յէից զարմից յերազգայից, հա-  
մազոյ շափի ոտիցընթաց... ի խաչ բարձ-  
րանալ դիտին առ հայր համբարձումն,  
ամբարձ յերամից յերազգայից վերասլա-  
ցիկ զարմացմամբ (Նար. ստ. էջ 479):

Նշիք կը յիշէ այս բառը երազգայից կամ  
յերազգայից ձևով, իրը անսույզ բառ, և  
կապելով յն. ի՞րծէ «նուիրական, սրբա-  
զան» բառին, կը մեկնէ «սրբազան, սրբ-  
բերգենի, երեազրեան»: Եթուաբէն բառին  
հետ համեմատութիւնը մերժելով հանդերձ՝  
նշանակութեան համար չեմ կրնար բան  
մը ըսել. միայն կը կարծեմ որ բառը յոզ.  
բացառական հոլովէ և ուղ. ձեն է բրազ-  
գայ. ամիկա պահուած կը զանենց Երազ-  
գայուր տեղական յատուկ անունին մէջ,  
որուն նշանակութիւնը նոյնպէս անյայտ է  
(իրը «երազգայ ունեցող»):

### 8. Խիթիփ

Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց  
կաթէր.

Լեզուին շարժողին քաղցրերգանայր տա-  
փղն,

Ի ծամբն խեղեկին հազրէ զի նոյն սէր  
Հոգիազգեստեալ գեղն ի զինոյն գոյն.  
Լարսիցն երամից զարդ, երամից զարդ,  
Ուլորս են առաջ եռահիւսակն բուրեալ  
այտիւց:

(Նար. ստ. 465)

Անծանօթ բառերը երկու են հոս. խե-  
ղիկ և հաղիկ. առաջինը այլուր գործա-  
ծուած է «ամբողջի մը կէս մասը» նշա-  
նակութեամբ. (Անկ. կող. Երզն. Մոթ.) և  
այս նշանակութիւնը կը յարմարի նաև  
հոս. ծամին խեղեկի մազերուն երկու  
բանուած հիւսերէն մէկն է: Հազրէ այ-  
լուր բնաւ զործածուած չէ. արդեօք «մա-  
զերուն մէջ ծաղիկ մը խրել, ծաղիկ մը  
անցունել» իմաստն ունի:

### 9. Հապրել

Տես նախորդը:

Շարունակերի

Հ. Աձաթծն